ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
MINISTRY OF FOREIGN AFFAIRS OF THE REPUBLIC OF ARMENIA

1112/ 05405

27.05.2019թ.

ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 091407836, էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ տնօրեն
Շուշան Դոյդոյանին

Հարգելի տիկին Դոյդոյան,

Ի պատասխան Ձեր հարցման (ՀՀ ԱԳՆ մուտք է եղել 16.05.2019թ.)՝ հայտնում ենք, որ 2014-2019թթ. ՀՀ ԱԳՆ համար ստեղծվել կամ վերամշակվել են հետևյալ կայքէջերը.

1. 2016 - 2018թթ. վերամշակվել են ՀՀ ԱԳՆ www.mfa.am պաշտոնական կայքէջը, ինչպես նաև արտերկրում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունների պաշտոնական կայքէջերը, ընդհանուր թվով 44 կայքէջ: Ծառայության արժեքը կազմել է 6.000.000 (վեց միլիոն) ՀՀ դրամ: Վճարումը կատարվել է ՀՀ ԱԳՆ բյուջեից:

2. 2017թ. ստեղծվել և գործարկվել է Երևանում կայանալիք Ֆրանկոֆոնիայի 17-րդ գագաթաժողովի http://francophonieerevan2018.am/fr/ պաշտոնական կայքէջը: Արժեքը կազմել է 1.280.000 (մեկ միլիոն երկու հարյուր ութսուն հազար) Վճարումը կատարվել է արտաբյուջետային միջոցներից:

3. 2018թ. վերամշակվել և գործարկվել է «Ընդդեմ ցեղասպանական հանցագործության» երրորդ գլոբալ ֆորումի http://www.genocideprevention.am/ պաշտոնական կայքէջը: Արժեքը կազմել է 1.470.000 (մեկ միլիոն չորս հարյուր յոթանասուն հազար) ՀՀ դրամ: Վճարումը կատարվել է ՀՀ կառավարության 2018թ. սեպտեմբերի 20-ի 1041-Ն որոշման առաջին կետով ՀՀ ԱԳՆ-ին հատկացված գումարներից:

Հարգանքով,

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ ԱՐՏԱԿ ԱՊԻՏՈՆՅԱՆ

Կատարող՝
Հրատվության և հանրային դիվանագիտության վարչություն
Հեռ. 060 620 234